պահի ամրողջ իւր հնութեամբ իւրով. թէպէտ և 'ի բազում տեղիս փոփոխեալ և այլայլեալ 'ի դարս և 'ի ժամանակս, այլ մնացորդք հնութեանց չտան ինչ կարծիս հեռագոյն քննչաց։

Մինչ 'ի գալուստ Խաչակրաց 'ի Ս. Երկիրն՝ չէ յայտ թէ յո՛յր ձեռս էր վանքն Սիոնի. թէպէտ Յոյնք միշտ պնդեն թէ 'ի ձեռս իւրեանց էր, և մինչեւ ցայսօր յիշեն 'ի պատարագին՝ զՊատրիարքն իւրեանց, յետ այլոց գաւառաց, 'ի վերջոյ և Պատրիարք Ս. Սիոնի. և ապա անկաւ 'ի ձեռս Լատինաց. արտաքսեալ և հալածեալ անտի 'ի ժամանակս ժամանակս, որպէս գրեցաք 'ի կարգի իւրեանց, մինչ 'ի յետին դրաւումն այլազգեաց։ Յետ գրելոյ մեր զայսոսիկ փոքր 'ի շատէ, մնայ արդ ստորագրել արդի եկեղեցին Սիոնի, որ 'ի ձեռս Արաբացւոց։ Վերջին դրաւող վանաց Սիոնի՝ է նա ինքն Շէյխ Ահմէտ Տէճէնի, մին 'ի գլխաւոր գիտնականացն Արաբացւոց, ուր բնակին ցարդ սերունդք նորին և այլք։

Յետ ոչ բազում աւուրց փակեցին զդուռն եկեղեցւոյն, և բացին նոր դուռն մեծ՝ որ հայի ընդ հիւսիս, յորոյ վերայ կառուցին զբնակարանս իւրեանց։ Եկեղեցին վերնատան կառուցեալ է 'ի վերայ 6 մարմարիոն սեանց, և 2 պատուհանք նորին հային ընդ հարաւ, 'ի քակել հին ծեփին երեւեցան յառաստաղս պատկերք դառին եւ առիւծու քանդակեալ 'ի վերայ քարանց, թէպէտ և կամեցեալ են աւերել, այլ ոչ խոպառ եղծանել, այլ նկարք եւ քանդակք 'ի խոյակս սեանց, խորտակեալ և եղծեալ խոպառ, կորուսեալ ճարտարութիւն քանդակագործին։ Ի ճակատ արեւելեան արտնին՝ ուր էր սեղանն քրիստոնէից, զետեղեալ կայ արձանագիր Արաբացի տառիւք, 'ի յիշատակ առաջին դրաւողի տեղւոյն, զերկայնութիւն եկեղեցւոյ 68, և լայնութիւնն 32 թզաչափ, դնէ Հաննա վարդապետ։ Ի հարաւոյ 5 աստիճանաւ ելանէ դէպ յարեւելս 'ի փոքր սենեակն, և անտի 'ի հիւսիսային դրանէ մտանէ 'ի սենեակն մեծ և քառակուսի, յորոյ վերայ ամբառնայ գմբեթն մեծ կապարապատ, ատ է տեղի Իշման Հոգւոյն Սրբոյ ըստ քրիստոնէից. ուր չինեալ են այլազգիք երեւոյթ ինչ շիրմի յեց յորմն հիւսիսոյ, ծածկեալ կտաւօք.